



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

12 սեպտեմբերի 2014 թվականի N Մ- 859 -Ա

քաղ. Երևան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2012 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 21-Ի N Մ-984-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ՄԱՍԻՆ («ՍՈՒՐԲ ԿԱՄԻԼԼՈ» ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄ)

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2014 թվականի օգոստոսի 15-ի N 07/80-2/ 12090-14 և օգոստոսի 13-ի N 06/5-1/12044-14, Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության 2014 թվականի օգոստոսի 13-ի N ՖԲ/ԱնՄ-4/6490-14, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության 2014 թվականի օգոստոսի 19-ի N ԱՄ/22.2/8505-14 ու Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետի 2014 թվականի օգոստոսի 14-ի N 02.1/3886-14 եզրակացությունները, **ռ ր ո շ ու մ է .***

1. Սահմանել, որ Իտալիայից «ՈՐՈՉԱ» բարեգործական կազմակերպության կողմից «Սուրբ Կամիլո» բարեգործական հիմնադրամի հասցեով ուղարկված բեռը (1,866 արկղ, 21,691.40 կգ ընդհանուր քաշով, 35,715.77 եվրոյին համարժեք դրամ արժողությամբ, փոխադրման ծախսերը կազմում են 9,000 եվրո, բեռի և բաշխման ցանկերը կցվում են, «Շիրակի» ՏՄ) ներմուծվում է Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2012 թվականի նոյեմբերի 21-ի «Սուրբ Կամիլո» բարեգործական հիմնադրամի կողմից 2013-2015 թվականներին իրականացվող ծրագրի մասին» N Մ-984-Ա որոշմամբ հաստատված ծրագրի շրջանակներում:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարություն, Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարություն ու Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետին:

ՆԱԽԱԳԱՀ



Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ